

# **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
(ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)

ԵՐԵՎԱՆ-2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| 1. ՆԱԽԱԲԱՆ.....  | 3  |
| 2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....  | 3  |
| 2.1. Ինքնաշխատ գործառույթների իրականացում.....   | 3  |
| 2.2. Տեղեկանքների պատրաստում և տրամադրում.....   | 3  |
| 2.3. Աջակցություն  |    |
| 2.3.1. Աջակցություն պատգամավորներին.....   | 13 |
| 2.3.2. Աջակցություն մշտական հանձնաժողովներին բյուջետային ծրագրերի կատարողական հիմնական ցուցանիշների մշակման և կատարելագործման գործում..... | 13 |
| 2.4. Ներգրավվածությունը այլ աշխատանքներում.....  | 13 |
| 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ(համակարգող փորձագետի և փորձագետների).....   | 17 |

## ՆԱԽԱԲԱՆ

Բյուջետային գրասենյակը 2016 թվականի մայիսի 16-ից գործել է հետևյալ կազմով՝ Գագիկ Բարսեղյան՝ համակարգող փորձագետ, Աշոտ Եղիազարյան և Աշոտ Ավետիսյան՝ փորձագետներ:

Բյուջետային գրասենյակի երկրորդ եռամսյակի հաշվետվությունը կազմվել է «Ազգային ժողովի կիսնոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներից ելնելով:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

### **Ինքնաշխատ գործառույթների իրականացում**

Բյուջետային գրասենյակը ղեկավարվելով «Ազգային ժողովի կիսնոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետի՝

- 9-րդ հոդվածով, սահմանված ժամկետներում, պատրաստել և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին է տրամադրել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագիրը,
- 10-րդ հոդվածով, սահմանված ժամկետներում, պատրաստել և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին է տրամադրել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը:

### **Տեղեկանքների պատրաստում և տրամադրում**

Բյուջետային գրասենյակը հաշվետու ժամանակահատվածում իրականացնելով իր գործառույթները հարցումների հիման վրա պատրաստել է 530 տեղեկանքներ, որոնք

տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղեկականերին, բոլոր՝ 12 մշտական հանձնաժողովներին ու 5 խմբակցություններին և պատգամավորներին: Մասնավորապես, Բյուջետային գրասենյակը ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետի՝

1. 5-րդ ենթակետով (պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում), սկսած փետրվարից, յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ, պատրաստել է ոլորտային տեղեկանքներ 2016թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծախսերի կատարման ընթացքի վերաբերյալ: Պատրաստված 61 տեղեկանքները տրամադրվել են Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովներին՝ ըստ իրենց գործունեության ոլորտների, ինչպես նաև սույն թվականի մայիս ամսից՝ ԱԺ նախագահի տեղակալներին և բոլոր խմբակցություններին: Մասնավորապես,

- առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովին՝ առողջապահության ոլորտի ծախսեր,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին՝ արտաքին հարաբերությունների ոլորտի ծախսեր,
- գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին՝ կրթության, հանգստի, մշակույթի և կրոնի, «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բաժնի «Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք» և «Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» խմբերի համար նախատեսված ծախսեր,
- գյուղատնտեսական եւ բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովին՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության, ջրամատակարարման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտների ծախսեր,
- մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովին՝ Մարդու իրավունքների պաշտպանի բնագավառում ծախսեր,

- պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովին՝ պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության ու փրկարար ծառայության ոլորտների ծախսեր,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, դատախազության, կալանավայրերի ու նախաքննության ոլորտների ծախսեր,
- սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին՝ սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսեր,
- տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովին՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, մարզպետարանների, կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» ոլորտների ծախսեր,
- ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին՝ պետական պարտքի գծով գործառնություններին ուղղված ծախսեր,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին՝ «Տնտեսական հարաբերություններ» բաժնի «Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային աշխատանքի գծով հարաբերություններ» խմբի, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագրի, ՏՏ ոլորտի խթանման ծառայությունների, լեռնարդյունահանման, արդյունաբերության և շինարարության, տրանսպորտի և կապի, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների (այլ դասերին չպատկանող)», վառելիքի և էներգետիկայի ոլորտների ծախսեր:

Տեղեկատվության աղբյուրներն են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 24.12.2015 թվականի թիվ 1555-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի

կատարումն ապահովող միջոցառումների մասին» և [www.e-gov.am](http://www.e-gov.am) (էլեկտրոնային կառավարում) ինտերնետային կայքի «Ինտերակտիվ բյուջե» բաժինը:

Վերոնշյալ տեղեկանքներն ընդգրկում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեների 11 ծախսային ուղղություններից 10-ը, որոնք ներառում են շուրջ 40 ոլորտներ ու 100-ից ավելի ենթավոլորտներ՝ կազմելով Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի ծախսերի շուրջ 90 %-ը:

2. 5-րդ ենթակետով (պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում) պատրաստել է 43 տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրման ընթացքի վերաբերյալ (ապրիլ, մայիս, հունիս)՝ ներառյալ 2014-2015թթ տվյալները: Դրանք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝

- Նախագահի տեղակալներին,
- առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովին,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին,
- գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին,
- գյուղատնտեսական եւ բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովին,
- մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովին,
- պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովին,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին,
- սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին,
- տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովին,
- Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովին,

- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին,
- ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին,
- Հայաստանի Հանրապետական խմբակցությանը,
- Բարգավաճ Հայաստան խմբակցությանը,
- Հայ Ազգային Կոնգրես խմբակցությանը,
- Հայ Յեղափոխական Դաշնակցություն խմբակցությանը,
- Օրինաց երկիր կուսակցություն խմբակցությանը:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման 2014-2016 թթ. Ապրիլ, մայիս, հունիս ամիսների ամփոփ բնութագրերը և «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 24.12.2015 թվականի թիվ 1555-Ն որոշումը:

3. 5-րդ ենթակետով (պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում) պատրաստել է տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ, հունվար-մայիս, հունվար-հունիս)՝ ներառյալ 2014-2015թթ տվյալները: Պատրաստված 43 տեղեկանքները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝

- Նախագահի տեղակալներին,
- առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովին,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին,
- գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին,
- գյուղատնտեսական եւ բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովին,

- մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովին,
- պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովին,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին,
- սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին,
- տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովին,
- Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովին,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին,
- ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին,
- Հայաստանի Հանրապետական խմբակցությանը,
- Բարգավաճ Հայաստան խմբակցությանը,
- Հայ Ազգային Կոնգրես խմբակցությանը,
- Հայ Յեղափոխական Դաշնակցություն խմբակցությանը,
- Օրինաց երկիր կուսակցություն խմբակցությանը:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային կայքի հրապարակումները՝ 2014-2016թթ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների և, ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշների վերաբերյալ (վիճակագրական տեղեկագրեր)):

4. 7-րդ ենթակետով (Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, այդ թվում՝ պետական բյուջեի վրա վարկերի սպասարկման



ազդեցության և Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց տրամադրած դրամաշնորհների վերաբերյալ տեղեկանքների տրամադրում) պատրաստել է 129 տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական պարտքի վերաբերյալ՝ 2016 թվականի ապրիլ, մայիս, հունիս ամիսների վերջի դրությամբ: Դրանք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝

- Նախագահի տեղակալներին,
- առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովին,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին,
- գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին,
- գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովին,
- մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին,
- պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովին,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին,
- սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին,
- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովին,
- Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովին,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին,
- ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին,
- Հայաստանի Հանրապետական խմբակցությանը,
- Բարգավաճ Հայաստան խմբակցությանը,
- Հայ Ազգային Կոնգրես խմբակցությանը,
- Հայ Յեղափոխական Դաշնակցություն խմբակցությանը,

- Օրինաց երկիր կուսակցություն խմբակցությանը:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսական տեղեկագրերը:

5. 1-ին ենթակետով (պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերը և ելքերը ծրագրային և (կամ) այլ ձևաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ տեղեկանքների տրամադրում) պատրաստել է տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ՝ ներառյալ 2011-2014թթ տվյալները: Դրանք վերաբերվել են պետական բյուջեի՝ եկամուտներին, ծախսերին, պակասուրդին ու դրա ֆինանսավորման աղբյուրներին, ինչպես նաև հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներին: Պատրաստված 57 տեղեկանքները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝

- Նախագահի տեղակալներին,
- առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովին,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին,
- գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին,
- գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովին,
- մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին,
- պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովին,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին,
- սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին,

- տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովին,
- Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովին,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին,
- Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին,
- Հայաստանի Հանրապետական խմբակցությանը,
- Բարգավաճ Հայաստան խմբակցությանը,
- Հայ Ազգային Կոնգրես խմբակցությանը,
- Հայ Յեղափոխական Դաշնակցություն խմբակցությանը,
- Օրինաց երկիր կուսակցություն խմբակցությանը:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության 2011-2015 թթ. պետական բյուջեների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները:

6. 5-րդ ենթակետով (պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում) պատրաստել է 3 տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2014-2016 թթ. առաջին եռամսյակներում պետական բյուջեների կատարման վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին և հանձնաժողովի անդամներին:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության 2014-2016 թթ. պետական բյուջեների առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ հաշվետվությունները:

7. 10-րդ ենթակետով (պետական բյուջեի կատարման (եռամսյակային) ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագրի պատրաստում) պատրաստել է 2016 թթ. առաջին եռամսյակում պետական բյուջեի

կատարման ընթացքի վերաբերյալ կառավարության տեղեկանքի 19 ամփոփ նկարագիր, որոնք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝

- Նախագահի տեղակալներին,
- առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովին,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին,
- գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին,
- գյուղատնտեսական եւ բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովին,
- մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովին,
- պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովին,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին,
- սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին,
- տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովին,
- Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովին,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին,
- ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին,
- Հայաստանի Հանրապետական խմբակցությանը,
- Բարգավաճ Հայաստան խմբակցությանը,
- Հայ Ազգային Կոնգրես խմբակցությանը,
- Հայ Յեղափոխական Դաշնակցություն խմբակցությանը,
- Օրինաց երկիր կուսակցություն խմբակցությանը:

8. 1-ին, 5-րդ և 7-րդ ենթակետերի հիման վրա Ազգային ժողովի պատգամավորների հարցումների (20 հարցում) հիման վրա պատրաստել է նրանց է տրամադրել 92

տեղեկանքներ, որոնք վերաբերվում են 2016թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրմանը, ծախսերի կատարման ընթացքին, պետական պարտքին, հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշներին և ՀՀ արտաքին գործերի նախարարության 2013-2015 թթ ոչ ֆինանսական ցուցանիշներին:

### **Աջակցություն**

*Աջակցություն Ազգային ժողովի պատգամավորներին.* Բյուջետային գրասենյակը, պատգամավորների 4 բանավոր հարցումների հիման վրա, անհրաժեշտ աջակցություն է տրամադրել նրանց կողմից արված և Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում ընդունված առաջարկությունների, ինչպես նաև 2015 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ:

*Աջակցություն Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների բյուջետային ծրագրերի կատարողական հիմնական ցուցանիշների մշակման և կատարելագործման գործում.* Բյուջետային գրասենյակի աշխատակազմը ներգրավված է բյուջետային ծրագրերի և դրանց կատարողական հիմնական ցուցանիշների մշակման ու բարելավման ոլորտային բոլոր 9 աշխատանքային խմբերում, որոնք իրենց գործունեությունն իրականացրել են նիստերի (շուրջ 30 նիստ) և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման միջոցով: Բյուջետային գրասենյակի աշխատակազմի ակտիվ աջակցությամբ բարելավվել են 14 բյուջետային ծրագրեր, որոնք ներառում են 56 միջոցառում: Սրանց ֆինանսական արժեքը կազմում է մոտ 152 մլն դրամ կամ 2016թվականի պետական բյուջեի ծախսերի շուրջ 11 տոկոսը:

### **Ներգրավվածությունն այլ աշխատանքներում**

Բյուջետային գրասենյակի աշխատակազմը ներգրավված է՝

- Պետական Ֆինանսների Կառավարման Համակարգի Բարեփոխումների ղեկավարման հանձնաժողովում,

- Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման մանրամասն գործողությունների ծրագրի մշակման աշխատանքային խմբում,
- ՀՀ և ԵՄ միջև մշակվող Հանրային վարչարարության բարեփոխումների ծրագրի /նախատեսված 2017-2019թթ. համար/ նախագծի մշակման գործընթացում:

Բոլոր ուղղություններով իրականացվել են աշխատանքներ՝ տրվել են կարծիքներ, կատարվել են դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել:

Ընդհանուր առմամբ, Բյուջետային գրասենյակը, իր գործունեության ընթացքում՝ (16.01.2016թ.-30.06.2016թ.)՝

- Ինքնաշխատ գործառույթների իրականացմամբ պայմանավորված պատրաստել և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին է տրամադրել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության և Հայաստանի Հանրապետության 2016 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագրերը,
- Ստացված 30, այդ թվում՝ 20 պատգամավորական հարցումները սահմանված կարգով բավարարվել են: Համապատասխան գրություններով՝ 320 հատ, ի պատասխան այդ հարցումներին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, մշտական բոլոր հանձնաժողովներին, բոլոր խմբակցություններին և պատգամավորներին տրամադրվել են 624 տեղեկանքներ (առաջին եռամսյակ՝ 6 հարցում՝ 156 տեղեկանք, երկրորդ եռամսյակ՝ 24 հարցում՝ շուրջ 530 տեղեկանք), որոնք վերաբերվել են՝
  - Հայաստանի Հանրապետության 2013-2016թթ պետական բյուջեների ծախսերին,
  - Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի ծախսերին,
  - Հայաստանի Հանրապետության 2014-2016թթ. պետական բյուջեների եկամուտների հավաքագրմանը՝ ըստ ամիսների,

- Հայաստանի Հանրապետության 2014-2016թթ. պետական պարտքին՝ ըստ ամիսների,
  - Հայաստանի Հանրապետության 2014-2016թթ. սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշներին՝ ըստ ամիսների,
  - Հայաստանի Հանրապետության 2013-2016թթ. պետական բյուջեների պաշտպանության, հասարակական կարգի պահպանման ու ազգային անվտանգության ոլորտների սախսերին,
  - Հայաստանի Հանրապետության 2015 թ. պետական բյուջեի կատարմանը, ներառյալ եկամուտները, ծախսերը, պակասուրդը և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 5 տարվա կտրվածքո,
  - Հայաստանի Հանրապետության 2016 թթ. առաջին եռամսյակում պետական բյուջեի կատարմանը,
  - Հայաստանի Հանրապետության 2015 թ. պետական բյուջեի կատարմանը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ոչ ֆինանսական ցուցանիշներ մասով:
- պատրաստել և Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին է տրամադրել 2016 թթ. առաջին եռամսյակում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ կառավարության տեղեկանքի 19 ամփոփ նկարագիր,
  - ակտիվ աջակցություն է ցուցաբերել Ազգային ժողովի 8 շտական հանձնաժողովներին՝ իրենց ոլորտներում բյուջետային ծրագրերի և դրանց կատարողական հիմնական ցուցանիշների մշակման և բարելավվման գործում, որի արդյունքում մշակվել կամ բարելավվել են 14 բյուջետային ծրագրեր, որոնք ներառում են 56 միջոցառում,
  - պատգամավորների 9 բանավոր հարցումների հիման վրա, անհրաժեշտ աջակցություն է տրամադրել նրանց կողմից արված և Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում ընդունված առաջարկությունների, ինչպես նաև 2015 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ,
  - ակտիվ աշխատել է՝

- Պետական Ֆինանսների Կառավարման Համակարգի Բարեփոխումների ղեկավարման հանձնաժողովում,
- Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման մանրամասն գործողությունների ծրագրի մշակման աշխատանքային խմբում,
- ՀՀ և ԵՄ միջև մշակվող Հանրային վարչարարության բարեփոխումների ծրագրի /նախատեսված 2017-2019թթ. համար/ նախագծի մշակման գործընթացում: